գօր Իւանիչն) Քալանթարեանց հետու բարձրից խողովակով ջուր է բերել սուրբ Նշանի դուռը ուխտաւորաց գործածութեան համար, որոյ աղբիւրի արձանագիրն է հետեւեալն :

«Մէյսարու դիւղի նորակառուցեալ աղբիւրս է անմոռանալի սիրոյ յիշատակ քնահկի Եամախու քաղաքի Աննայի կողակցի պարոն Յովհաննէս Քալանթարեանցի. Թուին 1879. 29 օգոստոսի» :

Սուրբ Նշանի շինութեան տեղը բոլորականման տափարակ լանջի վրայ լինելով աւելի վայելուչ է և գուարճալի, ար տեղից երեւում է թէ Մէյսարի դիւղը, Ջամախին, Մատրասան, Քարքանջն, Սաղիանն և շատ դիւղօրայք, և դէպի արեւելք Բագուի կողմը նայող Մարագայի մօտի սարերն, և թէ ընդարձակ դաշտն Մուղանու, որոյ միջով անցնում է Տփխիսից Բագու գնացող երկաթուղին, միով բանիւ մի աքանչելի տեսարան: Ծերունի Մէյսարեցւոց ասելով. «Այս տեղը վանքի կոչնակի դարկելու տեղն է, երբ կոչնակը առաւօտ իրիկուն դարկում էին, մեծ ու փոքր Մէյսարեցիքս վազում էինք վանքը ժամի ձայն լսելու. էրնէկ էր էն տարին, հոգի, հատատ կար. էս անիծած Լոմթերեանները ամեն բան խաբաբ արին" :

Սուրբ Նշանը եւս ունի արձանագրեր, զորս Շահխաթունեանցը նոյն հատորի մէջ յերես, 381 :

Վանքի արձանագրութիւնից յետոյ դրէ, յօդ. 616. «Ի միջոցի յիշեալ գեղջդ և վանանցն է տեղի գերեզմանոցաց և ի միջի մատուռն քարաշէն, յորոյ դրան վրայ ի վիմի անդ գրեալ այս ինչ :

„ Ամսուծով թվին ՌՃԿԸ ին (1719) »

„ Շինեցաւ սուրբ Նշանայ եկեղեցին յիշատակ ամեն քրիստոնէից ննջեցելոց, եկաց եւ քնահաց, արանց, եւ կանանց, ծերոց եւ տղայոց, մանաւանդ Ջուղայեցի Գէորգի որդի պարոն Պետրոսին եւ Շամախու Յակոբի որդի Թամուրին եւ